Արձանագրություն N 2

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-98 *ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

ք.Երևան ***« 18 » « 07 » 2025թ. ժ. 10:00***

- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության պետ Կ. Աբազյան (հանձնաժողովի նախագահ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Է. Օհանյան (գնահատող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի ավագ մասնագետ Լ. Մանուկյան (գնահատող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մաթևոսյան (բացող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության ավտոտնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հովհաննիսյան (բացող անդամ),*
- *ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սարգսյան (հանձնաժողովի քարտուղար):*

ՀՀ ներքին գործերի նախարարության կարիքների համար ***ապահովագրման ծառայությունների*** *ձեռքբերման նպատակով հայտարարված* ***ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-98*** *ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝*

1. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.***

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-98 *ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.*

N	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը	Հայտ ներկայացրած մասնակցի հասցեն, հեռախոսահամարը
1	Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ	ՀՀ, ք.Երևան, Արամի 3.5, Հեռ.՝ +374 60 54 00 00, էլ. հասցե՝ info@silinsurance.am
2	ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ Ապահովագրական ՍՊԸ	

2. ***Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.***

Մասնակցի ներկայացրած հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում է որպես վավեր, և համակարգը թույլ է տալիս

բացել հայտերը:

3. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

Մասնակիցների ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները.**

Չափաբաժին 1. Ապահովագրական ծախսեր «ԱՊՊԱ» CPV-66511180/10

Նախահաշվային գինը			**220 000**	
Չափաբաժին	**Մասնակցի անվանումը**	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	**Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ**	**220 000**	**0**	**220 000**
3	**ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ**	**0**	**0**	**0**

5. **Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.**

Մասնակից՝ **Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ-ի** կողմից ներկաացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է բավարար: Իսկ **ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ-ի** կողմից www.armeps.am կայքում տեսանելի է հայտ, սակայն կայքում չի ներբեռնվել գնային առաջարկը, դիմում-հայտարարությունը և իրական շահառուի կայքէջի հղումը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց և մերժեց՝

ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ պարբերությունը, «Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան ...»:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-98 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ-ին:**

Մասնակիցի կողմից ներկայացված գնառաջարկները չեն գերազանցում նախահաշվային գինը:

"Գնումների մասին" ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ-ի** հետ կկնքվի **ապահովագրման ծառայությունների** ձեռքբերման պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 5 դեմ 0 :

Հանձնաժողովի Նախագահ՝
ավտոտնտեսության պետ — Կ. Աբազյան

Հայտը գնահատող անդամներ՝
գլխավոր մասնագետ — Է. Օհանյան
ավագ մասնագետ — Լ. Մանուկյան

Հայտը բացող անդամներ՝
գլխավոր մասնագետ — Վ. Մաթևոսյան
գլխավոր մասնագետ — Մ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՏՎ ԳՀ գլխավոր մասնագետ — Ա. Սարգսյան